# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«4» սեպտեմբերի 2019 թվականի N 542-Ա

### ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, Ջրվեժ համայնքի փողոցների ասֆալտապատման ավարտված շինարարական աշխատանքների շահագործման ընդունելու նպատակով (գնման պայմանագրեր՝ «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-19/21» և «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-19/23»), ***որոշում եմ.***

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Սիրականյան Վահե | - աշխատակազմի գլխավոր մասնագետ (նախագահ, գնումների պատասխանատու ստորաբաժանման ղեկավար), |
| «ԹԵՐՄՈՇԻՆԹԵԼ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ | - Հեղինակային հսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| «Սեյսմանվտանգություն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ | - Հեղինակային հսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| «ԹԵՐՄՈՇԻՆԹԵԼ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ | - Տեխնիկական հսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ներկայացուցիչ | - Վերահսկողություն իրականացնող (համաձայնությամբ), |
| Ռուբիկ Բաղդասարյան | - «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍՊԸ-ի տնօրեն (գլխավոր կապալառու): |

2.Հանձնարարել հանձնաժողովին, ուսումնասիրելու և կազմելու ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունման ակտերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 4
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» սեպտեմբերի 2019 թվականի N 543-Ա

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Աիդա Գագիկի Գագիկյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 5-րդ թաղամասի թիվ 2/2 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ 170 հոգու համար ռեստորանի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Աիդա Գագիկի Գագիկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 4
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«4» սեպտեմբերի 2019 թվականի N 544-Ա

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Սամվել Բալասանի Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 3-րդ փողոցի թիվ 15 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սամվել Բալասանի Վիրաբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«5» սեպտեմբերի 2019 թվականի N 545-Ա

## ԺԻՐԱՅՐ ԲԱԳՍԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 8-րդ փողոցի թիվ 10 տան բնակիչ Ժիրայր Բագսիկի Խաչատրյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը բաղկացած է 7 անձից, ինքը, կինը՝ Սուսաննա Վոլոդյայի Մարտիրոսյանը, աղջիկը՝ Սրբուհի Ժիրայրի Մարտիրոսյանը, ծնված՝ 1999 թվականին, չեն աշխատում, խնամքի տակ են երկու անչափահաս երեխաները՝ Սվետլանա և Մաքսիմ Ժիրայրի Խաչատրյանները, ծնված՝ 2005 և 2008 թվականներին, նրա խնամքի տակ են նաև թոշակառու մայրը՝ Քնքուշ Ավագի Խաչատրյանը, ծնված՝ 1937 թվականին և 2-րդ կարգի հաշմանդամություն թոշակառու, հոգեկան հիվանդությամբ տառապող եղբայրը՝ Սուրեն Բագսիկի Խաչատրյանը, ծնված՝ 1963 թվականին: Ներկայումս անհրաժեշտություն է առաջացել սեփականության իրավունքով Ժիրայր Բագսիկի Խաչատրյանի ընտանիքին պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 8-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող գույքի վերագրանցում, որը ֆինանսական վիճակից ելնելով չեն կարողանում իրականացնել և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Ժիրայր Բագսիկի Խաչատրյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Ժիրայր Բագսիկի Խաչատրյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ժիրայր Բագսիկի Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 5
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«5» սեպտեմբերի 2019 թվականի N 546-Ա

### ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՀԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 10 հասցեի բնակիչ Սվետլանա Սահակի Հովհաննիսյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը բաղկացած է 7 անձից, ամուսինը՝ Արմեն Թովմասյանը, ամուսնու եղբայրը՝ Անդրանիկ Թովմասյանը, չունեն մշտական աշխատանք, ամուսնու մայրը՝ Աղավնի Գասպարյանը՝ ծնված 1957 թվականին, չի աշխատում, ամուսնու հայրը՝ Վաղարշակ Թովմասյանը, հանդիսանում է 1-ին կարգի հաշմանդամության թոշակառու և գտնվում է անկողնային վիճակում, նրանց խնամքի տակ են երկու անչափահաս երեխաները՝ Տաթևիկ և Լիլիթ Արմենի Թովմասյանները, ծնված 2008 և 2011 թվականներին, Սվետլանա Սահակյանն ունի առողջական խնդիրներ, ունի տեսողական խնդիրներ, տարել է աչքի վիրահատություն, ներկայումս կատարում է հավաքարարի սեզոնային աշխատանք: Նրանց ստացած եկամուտը չի բավականացնում բազմանդամ ընտանիքի կարիքները հոգալու համար և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Սվետլանա Սահակի Հովհաննիսյանը դիմել է համայնքապետարան՝ ընտանիքին ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Սվետլանա Սահակի Հովհաննիսյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սվետլանա Սահակի Հովհաննիսյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 5
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«5» սեպտեմբերի 2019 թվականի N 547-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ժորժ Թումասի Ամիրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 50-րդ փողոցի թիվ 40 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ժորժ Թումասի Ամիրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 5
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«5» սեպտեմբերի 2019 թվականի N 548-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Էլմիրա Վանիկի Թադևոսյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Էլմիրա Վանիկի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր Այգեգործական 1-ին հատված թիվ 23, թիվ 5 և թիվ 6 հասցեների հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Այգեգործական 1-ին հատված, թիվ 23:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Էլմիրա Վանիկի Թադևոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. օգոստոսի 5
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«5» սեպտեմբերի 2019 թվականի N 549-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Լիլիանա Ռաֆայելի Իսախանովայի (ծնված՝ 1953 թվականի ապրիլի 01-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 30-րդ թաղամասի թիվ 9 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 0092373 վկայականը, տրված 2000 թվականի մայիսի 31-ին, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, վավերացված 2019 թվականի հունիսի 20-ին, անհատ ձեռնարկատեր Արա Պետրոսյանի կողմից 2019 թվականի օգոստոսի 27-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Արա Պետրոսյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Լիլիանա Ռաֆայելի Իսախանովան սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 30-րդ թաղամասի թիվ 9 հասցեի այգեգործական հողակտորում 2002 թվականին ինքնակամ կառուցել է աստիճանահարթակ՝ 25,8 քառ. մետր, հենապատեր՝ 2,2 քառ.մետր և 3,6 քառ.մետր, պարիսպ՝ 2,2 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Լիլիանա Ռաֆայելի Իսախանովային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 30-րդ թաղամասի թիվ 9 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Լիլիանա Ռաֆայելի Իսախանովային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 30-րդ թաղամասի թիվ 9 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված աստիճանահարթակը՝ 25,8 քառ. մետր, հենապատերը՝ 2,2 քառ.մետր և 3,6 քառ.մետր, պարիսպը՝ 2,2 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 52 728 (հիսուներկու հազար յոթ հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Լիլիանա Ռաֆայելի Իսախանովային որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 5
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«5» սեպտեմբերի 2019 թվականի N 550-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Արա Արմենակի Գրիգորյանին և Զարինե Յուրիի Բաբայանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 26-րդ փողոցի թիվ 22 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ նկուղային հարկով մեկ հարկանի բնակելի տան, ավտոտնակի կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արա Արմենակի Գրիգորյանին և Զարինե Յուրիի Բաբայանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 5
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» սեպտեմբերի 2019 թվականի N 551-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արամայիս Սամսոնի Պապանյանի (ծնված՝ 1962 թվականի դեկտեմբերի 30-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 97/1 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 2718012 վկայական, տրված 2010 թվականի ապրիլի 16-ին, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի օգոստոսի 13-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արամայիս Սամսոնի Պապանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 97/1 հասցեի տնամերձ հողակտորում 2012 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն՝ 144,20 քառ.մետր, բաց պատշգամբ՝ 16,96 քառ.մետր, բնակելի տուն ձեղնահարկ՝ 144,20 քառ. մետր, բաց պատշգամբ ձեղնահարկ՝ 16,96 քառ. մետր և զուգարան՝ 1,98 քառ. մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արամայիս Սամսոնի Պապանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 97/1 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Արամայիս Սամսոնի Պապանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 97/1 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 144,20 քառ.մետր, բաց պատշգամբը՝ 16,96 քառ.մետր, բնակելի տուն ձեղնահարկը՝ 144,20 քառ. մետր, բաց պատշգամբ ձեղնահարկը՝ 16,96 քառ. մետր և զուգարանը՝ 1,98 քառ. մետր, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 841 121 (ութ հարյուր քառասունմեկ հազար մեկ հարյուր քսանմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արամայիս Սամսոնի Պապանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» սեպտեմբերի 2019 թվականի N 560-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Սմբատ Նորիկի Հովակիմյանի ընտանիքի խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Սմբատ Նորիկի Հովակիմյանին, Անահիտ Սուրենի Հակոբյանին, Նորայր Սմբատի Հովակիմյանին, Նարինե Սմբատի Հովակիմյանին, Արմինե Սմբատի Հովակիմյանին, Վարդան Սմբատի Հովակիմյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Հատիսի փողոցի 1-ին նրբանցքի թիվ 1 հասցեից բաժանված 1330,11 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Հատիսի փողոց, 1-ին նրբանցք, թիվ 1, 300,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Հատիսի փողոց, 1-ին նրբանցք թիվ 1/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սմբատ Նորիկի Հովակիմյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» սեպտեմբերի 2019 թվականի N 559-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գագիկ Աշոտի Ասատրյանի (ծնված՝ 1953 թվականի հոկտեմբերի 26-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի 48-րդ տեղամասի թիվ 7 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից 2019 թվականի ապրիլի 26-ին տրված N Հ-6486 արխիվային տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, վավերացված 2019 թվականի օգոստոսի 21-ին, «ՍՎ ՉԱՓԱԳՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի օգոստոսի 14-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ՍՎ ՉԱՓԱԳՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գագիկ Աշոտի Ասատրյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի 48-րդ տեղամասի թիվ 7 հասցեի այգեգործական հողակտորում 1987-2004 թվականներին ինքնակամ կառուցել է այգետնակ կիսանկուղ՝ 66,96 քառ.մետր, 1-ին հարկ՝ 48,06 քառ.մետր, ձեղնահարկ՝ 48,48 քառ.մետր, պարիսպ՝ 2,0 քառ.մետր, աստիճանավանդակ՝ 5,8 քառ.մետր, սանհանգույց՝ 1,82 քառ.մետր և աստիճան՝ 3,73 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 և 22.1 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գագիկ Աշոտի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր այգետարածքի 48-րդ տեղամասի թիվ 7 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Գագիկ Աշոտի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 48-րդ տեղամասի թիվ 7 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված այգետնակ կիսանկուղը՝ 66,96 քառ.մետր, 1-ին հարկը՝ 48,06 քառ.մետր, ձեղնահարկը՝ 48,48 քառ.մետր, պարիսպը՝ 2,0 քառ.մետր, աստիճանավանդակը՝ 5,8 քառ.մետր, սանհանգույցը՝ 1,82 քառ.մետր և աստիճանը՝ 3,73 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 23 738 (քսաներեք հազար յոթ հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Միրանյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գագիկ Աշոտի Ասատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 9

գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» սեպտեմբերի 2019 թվականի N 558-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Նարինե Արամայիսի Վարդանյանի դիմումը՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 500,0 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված բնակելի տունը՝ 84,24 քառ.մետր և հարթակը՝ 0,69 քառ.մետր արտաքին մակերեսներով վարձակալությամբ իրեն տրամադրելու մասին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ, 35-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 12-ի թիվ 21-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 2/1 հասցեում գտնվող բնակավայրի բնակելի կառուցապատման 500,0 քառ.մ մակերեսով հողամասը և հողամասում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված բնակելի տունը՝ 84,24 քառ.մետր և հարթակը՝ 0,69 քառ.մետր արտաքին մակերեսներով. վարձակալության իրավունքով տրամադրել կառույցն իրականացրած Նարինե Արամայիսի Վարդանյանին:

2.Պարտավորեցնել Նարինե Արամայիսի Վարդանյանին, կնքելու վարձակալության պայմանագիր և կատարելու դրանից ծագող իրավունքների պետական գրանցում:

3.Հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին՝ ստորագրելու անշարժ գույքի վարձակալության պայմանագիր:

4.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարինե Արամայիսի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 9
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«9» սեպտեմբերի 2019 թվականի N 557-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սվետլանա Գեղամի Հակոբյանի (ծնված՝ 1940 թվականի հունվարի 02-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2-րդ այգետարածքի 59-րդ թաղամասի թիվ 4 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ բացված չորս պատուհանները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2604-2013-07-0056 վկայական, տրված 2013 թվականի ապրիլի 26-ին, «ԴԱ-ԴԷ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի օգոստոսի 9-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԴԱ-ԴԷ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Սվետլանա Գեղամի Հակոբյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2-րդ այգետարածքի 59-րդ թաղամասի թիվ 4 հասցեի այգեգործական հողակտորում 2013 թվականին ինքնակամ կառուցել է ծածկ կիսանկուղ՝ 2,2 քառ.մետր, ծածկ՝ 3,8 քառ.մետր, ծածկ 1-ին հարկ՝ 5,0 քառ.մետր, աստիճանավանդակ՝ 4,9 քառ.մետր, բաց պատշգամբներ՝ 3,8 քառ.մետր և 5,0 քառ.մետր և հենապատ՝ 1,8 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև ինքնակամ բացել է չորս պատուհան:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Սվետլանա Գեղամի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2-րդ այգետարածքի 59-րդ թաղամասի թիվ 4 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունները, ինքնակամ բացված չորս պատուհանները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Սվետլանա Գեղամի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2-րդ այգետարածքի 59-րդ թաղամասի թիվ 4 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված ծածկ կիսանկուղը՝ 2,2 քառ.մետր, ծածկը՝ 3,8 քառ.մետր, ծածկ 1-ին հարկը՝ 5,0 քառ.մետր, աստիճանավանդակը՝ 4,9 քառ.մետր, բաց պատշգամբները՝ 3,8 քառ.մետր և 5,0 քառ.մետր, հենապատը՝ 1,8 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև ինքնակամ բացված չորս պատուհանները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 77 428 (յոթանասունյոթ հազար չորս հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սվետլանա Գեղամի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«9» սեպտեմբերի 2019 թվականի N 556-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վարդան Ռուբիկի Մարտիրոսյանի (ծնված՝ 1970 թվականի փետրվարի 14-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 39-րդ փողոցի թիվ 19 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 743803 վկայական, տրված 2002 թվականի հուլիսի 30-ին, «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի հունիսի 11-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Վարդան Ռուբիկի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 39-րդ փողոցի թիվ 19 հասցեի տնամերձ հողակտորում 2018 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն նկուղ՝ 73,9 քառ.մետր, բնակելի տուն 1-ին հարկ՝ 39,7 քառ.մետր, հենապատ՝ 4,5 քառ.մետր, աստիճաններ՝ 5,1 քառ.մետր, ծածկոց և հարթակ՝ 40,9 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Վարդան Ռուբիկի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 39-րդ փողոցի թիվ 19 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Վարդան Ռուբիկի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 39-րդ փողոցի թիվ 19 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի տուն նկուղը՝ 73,9 քառ.մետր, բնակելի տուն 1-ին հարկը՝ 39,7 քառ.մետր, հենապատը՝ 4,5 քառ.մետր, աստիճաններ՝ 5,1 քառ.մետր, ծածկոց և հարթակ՝ 40,9 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 416 676 (չորս հարյուր տասնվեց հազար վեց հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Վարդան Ռուբիկի Մարտիրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 9
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«6» սեպտեմբերի 2019 թվականի N 555-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 78-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի փոտրվարի 15-ի «Շինարարության թույլտվություններ տալու մասին» թիվ 78-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2.Քաղաքացիներ Կարեն Լենդրիկի Կյուրեղյանին և Արեգա Արշակի Գաբրիելյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 40-րդ փողոցի թիվ 31 հասցեի տնամերձ հողակտորում տալ երկհարկանի բնակելի տան, ավտոտնակի և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն:»:

2.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Լենդրիկի Կյուրեղյանին և Արեգա Արշակի Գաբրիելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«6» սեպտեմբերի 2019 թվականի N 554-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Գարիկ Աղասու Ամոլիկյանին տալ մեկ հարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժր գյուղի 34-րդ փողոցի թիվ 16 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Գարիկ Աղասու Ամոլիկյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գարիկ Աղասու Ամոլիկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«6» սեպտեմբերի 2019 թվականի N 553-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արմեն Սիգուշի Մովսիսյանին տալ երկհարկանի բնակելի տան, ավտոկայանատեղի, տաղավարների և լողավազանի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 8-րդ փողոցի 4-րդ նրբանցքի թիվ 7/1 հասցեի հողամասում:

2.Պարտավորեցնել Արմեն Սիգուշի Մովսիսյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արմեն Սիգուշի Մովսիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«6» սեպտեմբերի 2019 թվականի N 552-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Մարիամ Գեղամի Անտոնյանին տալ Լ=800 գծմ՝ D=50 մմ, Լ=148 գծմ՝ D=32 մմ, Լ=52 գծմ՝ D=20 մմ ջրագծի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 47-րդ փողոցի թիվ 6 հասցեի հողակտորում ջրամատակարարումն ապահովելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մարիամ Գեղամի Անտոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 6
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» սեպտեմբերի 2019 թվականի N 565-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի ԹԻՎ 514-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 22-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 514-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման նախաբանում «բացօթյա տաղավար՝ կից հարմարություններով» բառերը փոխարինել «բնակելի կառուցապատման շինություններ» բառերով:

2) որոշման 1-ին կետում «200 000 (երկու հարյուր հազար)» բառերը փոխարինել «100 000 (մեկ հարյուր հազար)» բառերով:

2.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մարինե Աղաբեկի Ծովանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 11
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» սեպտեմբերի 2019 թվականի N 564-Ա

## ՆՈՐԱ ՋԱՆԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 24 հասցեի բնակիչ Նորա Ջանիկի Մաթևոսյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը ներկայումս բաղկացած է 6 անձից, բնակվում են հեռու ազգականին պատկանող 13-րդ փողոցի թիվ 24 տանը, ինքը և ամուսինը՝ Սերոբ Մեսրոպյանը, չունեն մշտական աշխատանք, նրանց խնամքի տակ են 3 անչափահաս երեխաները՝ Մարիամ, Իսահակ, Աբրահամ Սերոբի Մեսրոպյանները, ծնված՝ 2001, 2002, 2005 թվականներին, ինչպես նաև աղջիկը՝ Աննա Սերոբի Մեսրոպյանը, ծնված 1995 թվականին, որն ունի լուրջ առողջական խնդիրներ, տարել է ողնաշարի մի քանի բարդ վիրահատություններ, 3-րդ կարգի հաշմանդամության թոշակառու է, գտնվում է անկողնային վիճակում և ունի երկարատև բուժման կարիք, ընտանիքի եկամուտը չի բավականացնում բազմանդամ ընտանիքի կարիքները հոգալու համար և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Նորա Ջանիկի Մաթևոսյանը դիմել է համայնքապետարան՝ ընտանիքին ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Նորա Ջանիկի Մաթևոսյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նորա Ջանիկի Մաթևոսյանի ընտանիքին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 11
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» սեպտեմբերի 2019 թվականի N 563-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Ռաֆիկ և Ռուբիկ Աղվանի Այվազյանների խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Քաղաքացիներ Ռաֆիկ և Ռուբիկ Աղվանի Այվազյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 12–րդ փողոցի 4–րդ փակուղու թիվ 1 հասցեից բաժանված S=215,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 12–րդ փողոց, 4–րդ փակուղի, թիվ 1, S=390,7 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 12–րդ փողոց, 4–րդ փակուղի, թիվ 1/1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռաֆիկ և Ռուբիկ Աղվանի Այվազյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» սեպտեմբերի 2019 թվականի N 562-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Հունան Հարությունի Մարտիրոսյանին տալ պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժի գյուղի 46-րդ փողոցի թիվ 15 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Հունան Հարությունի Մարտիրոսյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Հունան Հարությունի Մարտիրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» սեպտեմբերի 2019 թվականի N 561-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Նարինե Պարույրի Սարգսյանին տալ պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժր գյուղի 46-րդ փողոցի թիվ 13 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Նարինե Պարույրի Սարգսյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Նարինե Պարույրի Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 9
գ. Ջրվեժ